

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 փետրվարի 2013 թ.

N 44-Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԱՐՄԱՏԻ ՎՐԱ ԲՆԱՓԱՅՏԻ ԲԱՅԹՈՂՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԳՆԵՐԸ (ՄԵԿ ԽՏԱՑՎԱԾ ԽՈՐԱՆԱՐԴ ՄԵՏՐԻ ՀԱՄԱՐ) ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1051-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 6-րդ և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածներին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**.

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային ֆոնդում արմատի վրա բնափայտի բացթողման նվազագույն գները (մեկ խտացված խորանարդ մետրի համար)՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 30-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային ֆոնդում արմատի վրա բնափայտի բացթողման նվազագույն գները (մեկ խորանարդ մետրի համար) սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 18-ի N 235 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1051-Ն որոշումը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ
 ԱՐՄԱՏԻ ՎՐԱ ԲՆԱՓԱՅՏԻ ԲԱՅԹՈՂՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԳՆԵՐԸ
 (ՄԵԿ ԽՏԱՑՎԱԾ ԽՈՐԱՆԱՐԴ ՄԵՏՐԻ ՀԱՄԱՐ)**

ՀՀ	Ծառատեսակների անվանումը	Ներքին շուկայի համար			Արտահանման համար		
		Խոշոր տրամագիծը 25սմ ավելի	Միջին տրամագիծը 13/24 սմ	Փոքր տրամագիծը մինչև 12 սմ	Խոշոր տրամագիծը 25սմ ավելի	Միջին տրամագիծը 13/24 սմ	Փոքր տրամագիծը մինչև 12 սմ
1	2	3	4	5	6	7	8
1	Գործափայտ (խտացված խորանարդ մետր)						
1)	Հաճարենի, թխկի, թեղի	12000	9000	7500	14000	11000	10500
2)	Կաղնի, հացենի, լորենի	20000	16000	13000	23000	19000	17000
3)	Բոխի	7000	5000	4000	8400	6000	4800
4)	Այլ ծառատեսակներ	պայմանագրային			պայմանագրային		
2	Վառելափայտ						
1)	Ինքնամթերում (թափուկից)		240			3000	
2)	Ինքնամթերում (արմատի վրա)		1500			3000	

Ծանոթություն

- Ցանկում չնշված ծառատեսակների ինքնամթերումն իրականացվում է պայմանագրային գների հիման վրա, որը սահմանում է պետական լիազոր մարմինը:
- Քամատապալ գործափայտի իրացման գինը սահմանվում է տվյալ գործափայտի (ծառատեսակի) արժեքի 50 տոկոսի չափով:
- Հատումն իրականացվում է անտառային աշխատողների հսկողության ներքո:
- Վառելափայտի արտահանումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից իրականացվում է «Արցախանտառ» ՊՈԱԿ-ի կողմից մասնաճյուղերին, անտառապետություններին ընթացիկ տարվա համար սահմանված լիմիտների ծավալի հիման վրա:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ